ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրանց համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/43** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հուլիսի 11-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/43»*** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի հոկտեմբերի 17-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել հուշարձանի գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրա համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թվականի նոյեմբերի 17-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԴՐԱ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/43» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «17» 10 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Արտասգրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ա. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 11-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի հուշարձանի գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրա համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման պետական գնման N **«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/43»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.2. Պայմանագրի Հավելված 1-ի՝ ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի Բարձրաքաշի Սբ Գրիգոր վանական համալիրի ամրակայման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրա համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«20 հոկտեմբեր 2017 թ.»** բառերը փոխարինել **«17 նոյեմբեր 2017 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«ԱՐՏԱՍԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Բյուզանդի 1/3
Կառավարական շենք N 2,	հեռ.՝ 098 900 300
հեռ.՝ (011) 58-51-78	էլ. հասցեն՝ artasgroup@mail.ru
ՀՎՀՀ 02508054,	ՀՎՀՀ 00114891,
h/h 900011013209	h/h 2478700057060000
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	Արդշինբանկ ՓԲԸ
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ս. Մուրադյան	Ա. Հակոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.